

**ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ 1830-1850-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

ԹՈՒՆՅԱՆ ՎԱԼԵՐԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

ԳՊՀ դասախոս

e-mail: tunyanvalery@rambler.ru

ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի

«Պատմություն» բաժնի մագիստրատուրայի շրջանավարտ

e-mail: tateviktamamaveyan@mail.ru

Աշխատանքում քննվում է Արևելյան հարցը՝ որպես միջազգային դիվանագիտության առարկա, և ցույց տալիս դրա հանգուցալուծման կարևորությունը Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ: Մեծ տերություններից յուրաքանչյուրը գործում էր սեփական երկրի աշխարհագրական շահերից ելնելով: Ռուսաստանը, տնտեսապես և ռազմապես թույլ գտնվելով, չկարողացավ միայնակ հաղթահարել եվրոպական տերությունների համարեղ ստեղծած պայտեղը:

Բանալի բառեր՝ Մերձավոր Արևելք, եվրոպական մեծ տերություններ, Ռուսաստան, դիվանագիտական պայքար, համաեվրոպական համաձայնություն, շահերի հակասություն:

Մերձավոր Արևելքում օսմանյան կայսրության տիրույթներին տիրելու համար սուր պայքար էր ընթանում արևմտաեվրոպական առավել զարգացած երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Գերմանիայի միջև: Նրանք իրենց նպատակին հասնելու ճանապարհին գլխավոր մրցակից համարում էին Ռուսաստանին և փորձում էին համատեղ ուժերով խոչընդոտել նրա դիրքերի ամրապնդմանը տարածաշրջանում:

1830-40-ական թթ. Արևելյան հարցի շուրջ ուժեղացան մեծ տերությունների միջև առկա հակասությունները՝ կապված գաղութատիրական համակարգի հետ: Ակտիվ պայքար էր ընթանում Բալկանների և Առաջավոր Ասիայի համար: Այդ հակասությունների հանգուցակետը դառնում էր օսմանյան կայսրությունը:

Օսմանյան կայսրության դրությունը զգալիորեն բարդացավ. ազգային-ազատագրական պայքարի զարգացումը, կայսրության քաղաքական և

տնտեսական ճգնաժամը թուլացրին կենտրոնական իշխանության հիմքերը, ուժեղացան կենտրոնախույս ձգտումներ ունեցող տարրերը: Այդպիսի ձգտումներ ուներ Եգիպտոսի փաշա Մուհամմեդ Ալին՝ ցանկանալով ստեղծել անկախ արաբական պետություն:

Թուրք-եգիպտական կոնֆլիկտը ի սկզբանե լինելով Օսմանյան կայսրության ներքին խնդիրը՝ անմիջապես միջազգային նշանակություն ձեռք բերեց: Սրանով է բացատրվում Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև առանց այն էլ լարված հարաբերությունների սրումը: Վերջիններս օգտագործում էին ամեն պատեհ առիթ՝ օսմանյան կայսրության գործերին միջանտելու համար: Եգիպտոսի հետ կոնֆլիկտը հարթելու համար Անգլիան և Ֆրանսիան ոչ մի գործնական քայլ չկատարեցին Թուրքիային աջակցելու: Նրանք սահմանափակվեցին միայն Մուհամեդ Ալիի հետ բանակցություններում իրենց միջնորդությունը սուլթանին առաջարկելով: Ստեղծված դժվարին կացությունում թուրքական իշխանությունը նպատակահարմար համարեց դիմել Ռուսաստանի աջակցությանը¹:

1830-ական թվականներից Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ էին հաստատվել: Ցարական իշխանությունը հասկանում էր, որ իր համար տարածաշրջանում շահեկան է Թուրքիայի նման թույլ հարևանի առկայությունը: Նա չէր կարող հանդուրժել թուրքական կայսրության փլատակների վրա երիտասարդ և ուժեղ պետության ստեղծումը: Միաժամանակ միջազգային ասպարեզում Ռուսաստանի համար նպաստավոր պայմաններ էին ստեղծվել իր արտաքին քաղաքականության կարևոր խնդիր հանդիսացող սևծովյան նեղուցների կարգավիճակին լուծում տալու:

Ռուսաստանի իշխանությունները օգտվում էին այն հանգամանքից, որ նեղուցների կարգավիճակին լուծում տալը միայն սևծովյան ինքնիշխան երկրների՝ Ռուսաստանի և Թուրքիայի երկկողմանի քննարկման հարցն էր: Պետերբուրգյան ղեկավարությունը տվյալ ժամանակաշրջանում չէր ցանկանում նեղուցների հարցը համաեվրոպական քննարկման առարկա դարձնել:

Ռուսաստանի համար շահեկան էր նախատեսվելիք պայմանագրով ամրապնդել ռուս-թուրքական հարաբերությունները: Ցարական իշխանության համար բանակցություններում առավել կարևոր էր նեղուցների կարգավիճակի որոշման հարցը: Նկատի ունենալով հարավային սահմանների և սևծովյան ափամերձ շրջանների պաշտպանության անհրաժեշտությունը՝ ռուսական իշխանությունները միշտ ձգտում էին սահմանափակել օտարերկրյա ռազմանավերի մուտքը դեպի Սև ծով: Մյուս կողմից՝ Ռուսաստանի

¹ Ст' у История дипломатии, том I (автор тома Потемкин В. П.), Москва, 1959, էջ 553:

պարտավորությունը Թուրքիային ռազմական օգնություն տալու համար պահանջում էր ռուսական ռազմանավերի ազատ մուտք Բոսֆոր և Դարդանեղ նեղուցներով:

Պայմանագիրը ստորագրվեց 1833թ. հուլիսի 8-ին Կ.Պոլսից ոչ հեռու գտնվող Ունքիար-Իսքելեյս վայրում¹: Սա բացառիկ իրադարձություն էր ռուս-թուրքական ռազմաքաղաքական ու միջպետական դիվանագիտական հարաբերությունների պատմության մեջ: Այն ուներ համատեղ պաշտպանական միջազգային փաստաթղթի բնույթ, որի ժամկետը 8 տարի էր: 1-ին հոդվածը վերաբերում էր փոխադարձ օգնությանը. Ռուսաստանը պարտավորվում էր Մուհամմեդ Ալու հարձակման դեպքում Թուրքիային տրամադրել այնքան զորք, որքան երկու Բարձր պարտավորվող կողմերը անհրաժեշտ կհամարեն: 2-րդ հոդվածով հաստատվում էր Ադրիանապոլսի և նախկինում ստորագրված բոլոր ռուս-թուրքական պայմանագրերի հոդվածների անխախտելիությունը: 3-րդ հոդվածով Ռուսաստանը պարտավորվում էր Թուրքիային անհրաժեշտ օգնություն ցուցաբերել իր ծովային և ցամաքային ուժերով²:

Իսկ ինչ վերաբերում էր Թուրքիային, ապա նա ազատվում էր Ռուսաստանին ռազմական օգնություն ցուցաբերելուց: Սակայն դրա փոխարեն, պայմանագրի հատուկ գաղտնի հոդվածի համաձայն, պարտավորվում էր փակել բոլոր օտարերկրյա ռազմանավերի անցումը Դարդանեղի նեղուցով: Դա կազմում էր պայմանագրի հիմնական կետը և գլխավոր բովանդակությունը:

Դարդանեղի նեղուցի փակումը ոչ սևծովյան տերությունների ռազմանավերի համար զգալիորեն ապահովում էր Ռուսաստանի հարավային սահմանների անվտանգությունը, իսկ սևծովյան նեղուցների համատեղ պաշտպանությունը նրան հնարավորություն էր տալիս փակել թշնամու ռազմանավերի մուտքը նույնիսկ պատերազմի ժամանակ:

Ֆրանսիան և Անգլիան բացասաբար ընդունեցին պայմանագրի ստորագրման փաստը: Ընդհանուր վտանգը նրանց ստիպեց ժամանակավորապես մոռացության մատնել սեփական հակասությունները, հակառուսական խմբավորում ստեղծել, որի խնդիրն էր պայքարել Ունքիար-Իսքելեյսի պայմանագրի դեմ: Մերձավոր Արևելքում ավելի սրվեցին արդեն իսկ լարված ռուս-անգլիական հարաբերությունները: Անգլիան իր

¹ Տե՛ս Մուրադյան Մ., Մինասյան Է., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX), Երևան, 2005, էջ 277:

² Տե՛ս Юзефович Т., Договоры России с Востоком, политические и торговые, С. Петербург, 1869, էջ 89-92:

քաղաքականությամբ ձգտում էր թուլացնել Ռուսաստանի ազդեցությունը Կ.Պոլսում:

Ռուս-անգլիական պայքարը Թուրքիայում ազդեցության հասնելու համար ավելի խորացավ, բրիտանական իշխանությունները, չտալով օգնության որևէ պաշտոնական խոստում, կարողացան համոզել սուլթանին, որ Մեծ Բրիտանիան Մուհամմեդ Ալիի դեմ պայքարում կաջակցի Թուրքիային: Դա պատերազմ սկսելու վստահություն ներշնչեց Բ.Դռանը: Սակայն ռազմական գործողությունները Թուրքիայի համար բավականին անհաջող սկսվեցին: Դարձյալ թուրք-եգիպտական կոնֆլիկտը համաեվրոպական բնույթ ստացավ: Յուրաքանչյուր երկիր հանդես եկավ սեփական երկրի շահերից ելնելով: Սակայն բոլոր եվրոպական տերությունները մի բանում համակարծիք էին, այն է՝ հասնել Ունքիար-Իսքելեյսի պայմանագրի չեղարկմանը: Անգլիական և ֆրանսիական իշխանություններին հաջողվեց պայմանավորվել համատեղ քաղաքական և ռազմական գործողություններ իրականացնելու Մերձավոր Արևելքում:

Ստեղծված քաղաքական իրավիճակում Ռուսաստանը ստիպված եղավ փոխել իր մարտավարությունը օսմանյան կայսրության և մասնավորապես՝ նեղուցների խնդրի հետ կապված: Բացի դրանից՝ ռուսական իշխանությունները հրաժարվեցին դեպի Կ.Պոլիս ռազմական ներխուժումից և առաջարկեցին համատեղ հարթել թուրք-եգիպտական կոնֆլիկտը¹:

Արդյունքում 1832թ. հուլիսի 27-ին Մետերնիխը համատեղ հայտագիր ուղարկեց եվրոպական տերություններին, որով Թուրքիան դրվում էր նրանց հովանավորության տակ: Մեծ էր թուրքական իշխանությունների ուրախությունը այս կապակցությամբ, քանի որ նրանք վախենում էին Ռուսաստանի հետ համագործակցելուց: Թուրք-անգլիական միության փլուզումը, Վիեննայի վեհաժողովին մասնակցելուց հրաժարվելը թույլ տվեցին Ռուսաստանին որոշ ժամանակով ազատ գործելու:

Թուրք-եգիպտական կոնֆլիկտի երկրորդ փուլը հանգեցրեց Անգլիա-Ավստրիա-Ֆրանսիա դաշինքի փլուզմանը: Այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ Ռուսաստանը չի պատրաստվում օկուպացնել Կ.Պոլիսը և ռազմական ուժ կիրառել Մերձավոր Արևելքում առկա հարցերի լուծման համար, եվրոպական տերություններից յուրաքանչյուրը սկսեց նորից գործել իր հետաքրքրությունների շրջանակներում: Նեսսելրոդեն առաջարկում էր կամավոր հրաժարվել Ունքիար-Իսքելեյսի պայմանագրից և դրա փոխարեն Անգլիայի օգնությամբ ստեղծել նեղուցների նոր կարգավիճակ, որը կերաշխավորվեր եվրոպական տերությունների կողմից: Գլխավոր պայմանը

¹ Ст 'u История СССР, т. IV, Москва, 1967, էջ 499-500:

ենթադրվող պայմանավորվածության մեջ պետք է լիներ նեղուցների փակումը օտարերկրյա ռազմանավերի համար: Նեսսելրոդեյի հաղորդումները բարյացակամորեն ընդունվեցին Նիկոլայ I-ի կողմից: Որոշվեց բացել վեհաժողով Արևելքի հարցերի քննարկման համար, որին մասնակցում էին Անգլիան, Ռուսաստանը, Ֆրանսիան, Ավստրիան, Պրուսիան:

Երկար բանակցություններից հետո ի վերջո 1840թ. հուլիսի 15-ին ստորագրվեց Լոնդոնի համաձայնագիրը: Այն վերաբերում էր Թուրքիայի և Եգիպտոսի միջև տարածքային վեճերին: Համաձայնագրի հիմնական հոդվածներից մեկը ուներ համաեվրոպական նշանակություն, դրանով որոշված էր փակել նեղուցները բոլոր տերությունների ռազմանավերի համար: Այս հոդվածով սևծովյան նեղուցներին նոր կարգավիճակ էր տրվում, որը ավելի ձեռնտու էր անգլիական դիվանագիտությանը: Հոդվածի առկայությունը հարցականի տակ էր դնում Ռուսաստանի սևծովյան ավիամերձ շրջանների անվտանգությունը: Մերձավոր Արևելքում թուլացավ Ռուսաստանի ազդեցությունը և մեծացավ նրա կախվածությունը բրիտանական քաղաքականությունից:

Այնուամենայնիվ, վերոնշյալ համաձայնագիրը ևս չգոհացրեց կողմերից ոչ մեկին: Մեծ Բրիտանիայի դեսպանի առաջ խնդիր էր դրված հասնել նեղուցների վերաբերյալ համաեվրոպական համաձայնության, սահմանափակել Մերձավոր Արևելքում Ռուսաստանի ազդեցությունը և թույլ չտալ նրան հետագայում Արևելյան հարցին միակողմանի խառնվել: Արդյունքում ստորագրվեց Լոնդոնի 2-րդ համաձայնագիրը մի կողմից Թուրքիայի, իսկ մյուս կողմից՝ եվրոպական հինգ տերությունների միջև: Այն, ինչպես արդեն նշեցինք, ամբողջությամբ նվիրված էր նեղուցների կարգավիճակի խնդրին: Նեղուցները պետք է փակվեին բոլոր տերությունների ռազմանավերի համար¹, որը երաշխավորելու էր եվրոպական տերությունների կողմից: Այլ կերպ ասած՝ Լոնդոնի 2-րդ համաձայնագիրը թույլ էր տալիս ոչ սևծովյան երկրներին իրենց հսկողության տակ վերցնել Բոսֆորը և Դարդանեյը:

1841թ. նեղուցների վերաբերյալ կնքված միջազգային համաձայնագիրը այդպես էլ չնպաստեց Մերձավոր Արևելքում տերությունների միջև առկա հակասությունների հարթեցմանը²: Հիմնական հակամարտող կողմերը՝ մի կողմից Ռուսաստանը, իսկ մյուս կողմից՝ Անգլիան և Ֆրանսիան, ձգտում էին գերիշխող դիրք գրավել Մերձավոր Արևելքում:

¹ Տե՛ս Юзефович Т., նշվ. աշխ., էջ 101:

² Տե՛ս Георгиев В. А., Киняпина Н. С., Панченкова М. Т., Шеремет В. И., Восточный вопрос во внешней политике России, Москва, 1978, էջ 121:

19-րդ դարի 50-ական թթ. Արևելյան ճգնաժամը սկսվեց Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև օսմանյան կայսրության տարածք կազմող Պաղեստինի սրբավայրերի վերաբերյալ ծագած տարածայնություններից: Սրբավայրերի վեճի քողի տակ և՛ Ռուսաստանը, և՛ Ֆրանսիան ունեին քաղաքական նպատակներ: Կոնֆլիկտի նախաձեռնողը եղավ Ֆրանսիան, և դա պատահական չէր: Նա Արևելյան հարցի պատմության ողջ ընթացքում հետապնդում էր մի նպատակ՝ Ռուսաստանին դուրս մղել Թուրքիայից: Սրբավայրերի վեճը վերաբերում էր Մերձավոր Արևելքում կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների իրավունքներին և առանձնաշնորհներին: Ի վերջո կրոնական հարցը վերածվեց քաղաքականի, որի լուծումը անմիջականորեն կախված էր Բ.Դռան դիրքորոշումից: Խնդրի շուրջ համաձայնության չգալով և հիմք ընդունելով ֆրանսիական և անգլիական դիվանագետների հավաստիացումները՝ թուրքական իշխանությունները տեսան բացառիկ հնարավորություն արևմուտքի հզոր տերությունների օգնությամբ պարտության մատնելու իրենց դարավոր թշնամուն՝ Ռուսաստանին:

Չխորանալով ռազմական գործողությունների ընթացքի մեջ՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ պատերազմի սկզբնական շրջանում՝ 1853թ., Ռուսաստանի ցամաքային բանակը և նավատորմը ձեռք բերեցին ակնառու հաղթանակներ թուրքերի նկատմամբ, որը մտավախություն առաջացրեց հատկապես Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջանների մոտ: Նրանք համոզվեցին, որ Թուրքիան ոչ միայն չի կարողանա շարունակել դիմադրությունը, այլև արդեն կրել է փաստացի ծանր պարտություն: Ելնելով այս հանգամանքից՝ նրանք պատերազմ հայտարարեցին Ռուսաստանին: Վերջինիս միջազգային ասպարեզում մեկուսացնելու և պատերազմում հաղթելու նպատակով անգլիական ու ֆրանսիական դիվանագիտությունը իր ուշադրությունը կենտրոնացրեց Վիեննայի վրա՝ ամեն գնով փորձելով պատերազմի մեջ ներքաշել Ավստրիային: Վիեննային էր սևեռված նաև ռուսական դիվանագիտության ուշադրությունը:

1854թ. հունվարի վերջին Նիկոլայ I-ը Վիեննա ուղարկեց կոմս Օռլովին: Նա Ֆրանց-Իոսիֆին հանձնեց Ռուսաստանի կայսրի առաջարկը՝ տեղեկացնել կամ պարզաբանել ավստրիական կայսրության դիրքորոշումը, եթե պատերազմ սկսվի Ռուսաստանի և դաշնակիցներ Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Եթե Ավստրիան ընդուներ Նիկոլայ I-ի առաջարկը, ապա Ռուսաստանը պարտավորված կլինի ճանաչել կայսրության տարածքային ամբողջականությունը: Սակայն Օռլովի դիվանագիտական առաքելությունը նպատակին չհասավ, քանզի Ֆրանց-Իոսիֆը և ավստրիական կաբինետն անընդունելի համարեցին կայսրի առաջարկը:

Քիչ թե շատ սփոփիչ լուրեր էին ստացվում Բեռլինից: Թեև Պրուսիան նույնպես չէր շտապում պաշտոնապես հայտարարել իր չեզոքությունը, այսուհանդերձ, Ֆրիդրիխ-Վիլիելմ IV-ը խոստացավ ոչ մի հանգամանքում չպատերազմել Ռուսաստանի դեմ¹: Իսկ փաստացի Իտալիան ներկայացնող Սարդինական թագավորությունը՝ Պյեմոնտը, անգլո-ֆրանս-թուրքական դաշինքին միացավ պատերազմի եզրափակիչ փուլում ու մասնակցեց ռազմական գործողություններին:

Անգլիան ու Ֆրանսիան Ռուսաստանին պատերազմ հայտարարելուց հետո անմիջապես չձավալեցին ռազմական գործողությունները: Դաշնակիցների շրջանում՝ հատկապես Անգլիայի ու Ֆրանսիայի միջև, դեռևս լիովին բացահայտված չէին շահերի տարբերությունները: Սակայն Սևաստոպոլի անկումից հետո դրանք արտահայտվեցին ամենայն պարզությամբ: Նապոլեոն III-ին բնավ էլ չէր հրապարտում ոչ Անգլիայի հզորացումը, ոչ էլ Ռուսաստանի՝ չափից ավելի թուլացումը:

1854թ. հունիսի 18-ին Նապոլեոն III-ը Ռուսաստանի կայսրին ներկայացրեց «Չորս կետերը», որոնք, իհարկե, նախապես համաձայնեցված էին Անգլիայի ու Ավստրիայի հետ ու հայտագրված էին այդ տերությունների անունից²: Մասնավորապես պահանջվում էր սևծովյան նեղուցների մասին 1841թ. կոնվենցիան ծառայեցնել «Ի շահ և հօգուտ եվրոպական հավասարակշռության»³:

Նիկոլայ I-ը, թեև ստացավ «Չորս կետերը», սակայն չպատասխանեց, որովհետև նշված չէր պատասխանի համար նախատեսված ժամկետը: Ռազմական գործողությունների աշխարհագրությունը գնալով ընդլայնվում էր, իսկ դրությունը Ռուսաստանի համար դառնում էր ծանր ու աղետալի: Արդեն լիովին գիտակցում էին, որ անհեռանկարային է շարունակել, առավել ևս, բեկում մտցնել, պատերազմի մեջ: Շուտով Եվրոպան տեղեկացավ, որ Նիկոլայ I-ն ընդունում է Ավստրիայի դիվանագետների օգոստոսյան չորս կետերը: Կայսրը նման որոշում կայացրեց մեծ դժվարությամբ՝ ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը սթափ գնահատելուց հետո: Պարզ էր, որ Ռուսաստանի ղեկավարությունը այսպիսի լուրջ զիջում կատարելով

¹ Ст'ю Зайончковский А. М., Восточная война 1853-1856 гг., том II, часть вторая, С.Петербург, 1908, էջ 805-807:

² Ст'ю Нежинцкий Л. Н., Игнатъев А. В. (ред.), Россия и Черноморские проливы (XVIII-XX столетия), Москва, 1999, էջ 150:

³ Ст'ю История внешней политики России, первая половина XIX века, Москва, 1999, էջ 398:

ցանկանում էր Ավստրիային հեռու պահել պատերազմի մեջ մտնելու՝ Ռուսաստանի համար խիստ անցանկալի հնարավորությունից¹:

30-ամյա գահակալումից հետո մահացավ Ռուսաստանի կայսր Նիկոլայ I-ը: Նիկոլայ I-ի մահվան լուրը միայն հայտնեցին Նապոլեոն III-ին, որը շտապեց իր ցավակցությունը հայտնել Ալեքսանդր II-ին՝ հոր մահվան համար: Ալեքսանդր II-ի անունից Նեսսելրոդեն, շնորհակալություն հայտնելով հանդերձ, նշեց, որ անհասկանալի է, թե ինչու են Ռուսաստանը և Ֆրանսիան պատերազմում, որ խաղաղությունը կվերականգնվի, երբ այն ցանկանա Ֆրանսիայի կայսրը: Պատերազմի եզրափակիչ փուլում արդեն լիովին ի հայտ եկան անգլո-ֆրանսիական հակասությունները, որոնք հիմնականում հարթվում էին, քանի դեռ պատերազմը շարունակվում էր և չէր երևում նրա ավարտը: Սևաստոպոլի անկումից հետո Նապոլեոն III-ի փառասիրական մղումները հիմնականում բավարարվեցին, քանզի նա կարող էր իր հետապնդած նպատակները համարել իրագործված: Ֆրանսիայի կայսրը քաջ գիտակցում էր, որ պատերազմը և հատկապես Ռուսաստանի թուլացումը ձեռնառու կլինի միայն Անգլիային:

Վիեննայի «չեզոք» դիվանագետներն իրենց հերթին ուշի-ուշով հետապնդում էին, թե ինչպես են ռուսներն ու ֆրանսիացիները փորձում մերձենալ: Նրանք ոչ առանց հիմքի Ավստրիայի համար նկատեցին լուրջ վտանգ և թեքվեցին անգլո-ֆրանսիական դիվանագիտության կողմը: Այս հանգամանքը զգալիորեն բարդացրեց առանց այն էլ Ռուսաստանի համար ստեղծված ծանր դրությունը, որովհետև մի կողմից դադարեցվեցին ռուս-ֆրանսիական սկսված բանակցությունները, իսկ մյուս կողմից՝ նկատելիորեն ակտիվացավ Ավստրիական դիվանագիտությունն այն առումով, որ նրա ներկայացուցիչներն արդեն փաստացի վերջնագրի ձևով շտապեցին պահանջներ ներկայացնել Ռուսաստանին: Ավստրիական վերջնագրի պատասխանի համար տրվում էր երեք շաբաթ ժամանակ՝ մինչև 1856թ. հունվարի 6-ը: Վերջնագրի մեջ աներկմիտ ձևով նշվում էր, որ եթե Ռուսաստանը մերժի այդ պահանջը, Ավստրիան հարկադրաբար կխզի հարաբերությունները Ռուսաստանի հետ, որը, ըստ էության, ոչ այլ ինչ էր, եթե ոչ պաշտոնական պատերազմ երկու երկրների միջև:

Վերջնագիրը կազմված էր հինգ կետից և, ինչպես սպասվում էր, սահմանափակում էր Ռուսաստանի իրավունքները, այլ կերպ ասած, անթաքույց ուղղված էր կայսրության կենսական շահերի դեմ: Ռուսաստանի համար ամենաձանր և անընդունելի վերջնագրի երրորդ կետը Սև ծովը

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 399:

հայտարարում էր չեզոք, մուտքն արգելվում էր բոլոր երկրների ռազմանավերի համար: Արգելվում էր տերությունների նավախմբերին Բոսֆորի և Դարդանեղի նեղուցներով մտնել Սև ծով, իսկ Ռուսաստանին և Թուրքիային արգելվում էր Սև ծովում պահել ռազմանավեր, այդ ծովի ափերին ունենալ ռազմածովային զինանոցներ և ռազմական ամրություններ: Չորրորդ՝ Ռուսաստանը հրաժարվում էր Սուլթանի ուղղափառ հպատակներին հովանավորելուց: Եվ վերջապես հինգերորդ կետն արձանագրում էր, որ տերություններն իրենց իրավունք են վերապահում չորս կետերից զատ ներկայացնել նոր պահանջներ հանուն Եվրոպայի ընդհանուր շահի¹:

Ի վերջո, որոշվեց պատասխանել, որ Ռուսաստանն ընդունում է Ավստրիայի առաջարկը, թեև սկզբից փորձեր արվեցին վերջնագիրն ընդունել որոշ վերապահումով: Սակայն այդ հույսերը չարդարացան Բուլոյի կարծի դիրքորոշման պատճառով: Խորհրդակցությունը վերջապես որոշեց ընդունել վերջնագիրը որպես հաշտության նախնական պայման²: Այդպես ավարտվեց Արևելյան պատերազմի դիվանագիտական հակամարտության առաջին փուլը: Առջևում սպասվում էր ավելի ծանր դիվանագիտական պայքար Փարիզի խաղաղության վեհաժողովում:

Եթե Անգլիան ու Ֆրանսիան, գրավելով Սևաստոպոլը, փաստորեն, պարտության մատնեցին Ռուսաստանին, ապա հինգ կետերից բաղկացած վերջնագրի մշակման գործում ակնհայտ էր ավստրիական դիվանագիտության հաղթանակը: Փարիզի խորհրդաժողովը բացվեց 1856թ. փետրվարի 13-ին: Խորհրդաժողովի աշխատանքներին մասնակցեցին Ֆրանսիայի, Անգլիայի, Ավստրիայի, Ռուսաստանի, Օսմանյան կայսրության, Սարդինական թագավորության լիազոր ներկայացուցիչները: Երբ խորհրդաժողովում հիմնականում գլխավոր հարցերն արդեն լուծված էին, թույլատրեցին մասնակցել նաև Պրուսիայի ներկայացուցիչն: Օռլովը, ժամանելով Փարիզ, հենց սկզբից մինչև վերջ իր ողջ դիվանագիտական գործողությունը կառուցեց Ֆրանսիայի կայսրի հետ մերձենալու, նրանից աջակցություն ստանալու մարտավարության վրա: Ֆրանսիական դիվանագիտությունը ցանկալի էր համարում փակել երկու երկրների միջև եղած թշնամական փուլը և միջպետական առնչություններում բացել որակապես նոր էջ:

Ռուսաստանի դիրքերը զգալիորեն ամրապնդեց Կարսի հզոր ամրոցի կապիտուլյացիան: Սևաստոպոլի հերոսական պաշտպանությունը հարկադրում էր դաշնակիցներին Փարիզի խորհրդաժողովում չափավորել իրենց պահանջները: Ինչ վերաբերում է Նապոլեոնին, ապա նրա

¹ Տե՛ս նույն տղում, էջ 410:

² Նույն տեղում:

քաղաքական խառը բավականին բարդ էր, իսկ դիվանագիտական մտահղացումը՝ հեռուն գնացող: Նա ծրագրում էր հաստատել Ֆրանսիայի գերիշխանությունը Եվրոպայում: Այդ նպատակով Նապոլեոն III-ը ամրապնդեց հարաբերությունները Անգլիայի և Ավստրիայի հետ: 1856թ. ապրիլի 3-ին ստորագրեց համաձայնագիր՝ Եռյակ դաշինք Անգլիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի միջև: Այս պայմանագիրը երաշխավորում էր Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու անկախությունը: Ձևավորվեց, այսպես կոչված, «Ղրիմի համակարգը»¹, որը ուներ բացահայտ հակառուսական ուղղվածություն:

Փարիզի հաշտության պայմանագիրը ստորագրվեց 1856թ. մարտի 18-ին, որը կազմված էր 34 հոդվածից և մեկ «լրացուցիչ և ժամանակավոր» հոդվածից²: Պայմանագրին կցված էին Դարդանելի ու Բոսֆորի նեղուցների, Սև ծովում ռուսական և թուրքական նավերի, Ալանդական կղզիների ապառազմականացման մասին կոնվենցիաները: Հաշտության պայմանագիրն «արձանագրեց Ռուսաստանի պարտությունը Ղրիմի պատերազմում»: Դանության իշխանությունների և սուլթանի հպատակ ուղղափառների նկատմամբ ռուսական հովանավորության վերացումը զգալիորեն թուլացրեց Ռուսաստանի դիրքերը Մերձավոր Արևելքում ու Բալկաններում, նվազեց կայսրության, որպես մեծ տերության միջազգային հեղինակությունը, էապես խախտվեց «Եվրոպական հավասարակշռությունը»: Ռուսաստանի համար պայմանագրի ամենաձանր հոդվածները նախատեսում էին չեզոքացնել Սև ծովը: Ցարական իշխանությունը այլևս չէր կարող խառնվել բալկանյան և մերձավորարևելյան հարցերին: Սև ծովը հայտարարվում էր չեզոք գոտի, որը նշանակում էր, որ արգելվում էր Ռուսաստանին սևծովյան ափամերձ շրջաններում ունենալ ռազմածովային ուժեր, ինչպես նաև ամրություններ և զինապահեստներ: Այս նույն սկզբունքով պետք է առաջնորդվեր նաև Թուրքիան, որը գտնվում էր առավել շահեկան պայմաններում, քան Ռուսաստանը. նրա ձեռքում էր կենտրոնացած նեղուցների վերահսկողությունը, ինչպես նաև միջերկրածովյան ռազմանավերը: Ռուսաստանի տարածքային կորուստներն աննշան էին ու նվազագույն: Հատուկ կոնվենցիայով սուլթանին պարտադրվում էր արգելել օտար տերությունների ռազմանավերի մուտքը սևծովյան նեղուցներ, «քանի դեռ Բ.Դուռը կլինի խաղաղության մեջ»:

¹ Տե՛ս Գեորգիև Բ. Ա., Կինյապինա Ն. Շ., Փանչենկովա Մ. Թ., Շերեմետ Բ. Ի., Восточный вопрос во внешней политике России, Москва, 1978, էջ 150:

² Տե՛ս Գեորգիև Է. Ա. (ред.), Сборник договоров России с другими государствами, 1856-1917, Москва, 1952, էջ 23:

Ան ծովի չեզոքացումը ինքնին հանգեցնում էր Բալկանյան թերակղզում ցարական իշխանության դիրքերի թուլացմանը: Այդուհանդերձ դաշնակիցները ձգտում էին ոչ միայն փաստացի, այլև իրավաբանորեն Ռուսաստանին զրկել բալկանյան ժողովուրդներին հովանավորելու իրավունքից: XX հողվածով ամրագրված էր, որ «երաշխավորվող տերություններից ոչ մեկին չի թույլատրվում խառնվելու Դանուբյան իշխանությունների ներքին գործերին»: Ընդունվել էր նաև Սերբիային վերաբերող նմանատիպ որոշում: Մոլդավիան և Վալախիան խուսափեցին ավստրիական լծի տակ հայտնվելուց: Խորհրդաժողովի օրակարգում դրված էր նրանց քաղաքական միավորման անհրաժեշտության հարցը: XXV հողվածով ստեղծվելու էր հատուկ միջազգային հանձնաժողով, որը Դանուբյան իշխանությունների ժողովրդական զանգվածների վիճակը թեթևացնելու համար պետք է մշակեր բարենորոգումների ծրագիր:

Փարիզի վեհաժողովում Թուրքիան հանդես էր գալիս պասիվ դիտորդի դերում՝ իր պահանջները ներկայացնելով Ավստրիայի, Ֆրանսիայի և Անգլիայի անունից: Եվ հենց վերջինիս պահանջով էլ հաշտության պայմանագրի III հողվածով Ռուսաստանը Թուրքիային զիջեց Կարսը, ինչպես նաև պատերազմի ընթացքում Փոքր Ասիայում գրավված մի շարք այլ տարածքներ, որոնք փոխանակեցին դաշնակիցների կողմից գրավված Ղրիմի քաղաքների հետ¹:

Այսպիսով, Մերձավոր Արևելքում և Բալկաններում ուժերի հարաբերակցությունը զգալիորեն փոխվեց ոչ հօգուտ Ռուսաստանի: Ցարական իշխանության ջանքերը տարածաշրջանում իշխող դիրք գրավելու համար ավարտվեցին անհաջողությամբ: Հարցականի տակ դրվեց Ռուսաստանի սևծովյան ափամերձ շրջանների անվտանգությունը: Միջազգային ասպարեզում խարխվեց Ռուսաստանի հեղինակությունը որպես գերիշխող տերություն, որը հանգեցրեց լուրջ հետևանքների: Փարիզի հաշտության պայմանագրով եվրոպական տերությունները Մերձավոր Արևելքում իրենց գաղութատիրական քաղաքականության համար մեծ հեռանկար էին ստեղծում Թուրքիային Անգլիայից և Ֆրանսիայից ֆինանսական և քաղաքական կախվածության մեջ դնելով: Արևելյան պատերազմում պարտությունից և Փարիզի հաշտության պայմանագրի ստորագրումից հետո Ռուսաստանը երկար ժամանակ խորը սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամ ապրեց:

¹ Ст'ю Туян В. Г., Россия и Армянский вопрос, Еրևան, 1997, էջ 65:

THE EASTERN ISSUE IN RUSSIAN FOREIGN POLICY IN 1830-1850

TUNYAN VALERI

*Doctor of History, Professor,
Lecturer, Gavar State University*

TAMAMAVEYAN TATEVIK

*Graduate of Master's Degree program of
the Department of History, GSU*

The article examines the Eastern Issue as a matter of international diplomacy and highlights the significance of its resolution in Russian foreign policy. Each of the major states acted in the interests of their own country. Being economically and militarily weak, Russia was not able to overcome the barrier created by the European powers.

Keywords: *Middle East, great European powers, Russia, diplomatic struggle, Pan-European agreement, conflict of interests.*

ВОСТОЧНЫЙ ВОПРОС В СФЕРЕ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ РОССИИ В 1830-1850 ГГ.

ТУНЯН ВАЛЕРИЙ

*доктор исторических наук, профессор,
преподаватель ГГУ*

ТАМАМАВЕЯН ТАТЕВИК

выпускница магистратуры отделения истории ГГУ

В работе анализируется Восточный вопрос как предмет международной дипломатии и показана важность его развязки во внешней политике России. Каждая из великих держав действовала исходя из географических интересов своей страны. Россия, будучи слабой в экономическом и военном отношении, не смогла в одиночку преодолеть барьер, созданный совместно европейскими державами.

Ключевые слова: *Ближний Восток, великие европейские державы, Россия, дипломатическая борьба, общеевропейское соглашение, конфликт интересов.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 08.09.2019թ.:

Հոդվածը գրախոսվել է 06.10.2019թ.: